

Система показателей для людей, не имеющих кредитной истории, близка к средней, что означает, что те, кто еще не был одолжен, также смогут кредитовать и формировать определенную кредитную историю. Тем не менее, средний уровень скоры показывает, что система оценки видит фактор риска неопределенности в отсутствие ранее существующих кредитных данных. С другой стороны, вы не знакомы с поведением нового клиента, поэтому можете пойти на этот риск и получить прибыль.

MERY NIKOLAYAN

CREDIT SCORING: SCORING SYSTEM PERFORMANCE MODEL

Key words: scoring system, creditworthiness assessment, credit bureau, credit scoring model.

The scorecard of people with no credit history is close to the average, which means that those who have not yet been lent, will also be able to lend to and form a certain credit history. However, the average level of scorpion shows that the scoring system sees a risk factor of uncertainty in the absence of previously existing credit data. On the other hand, we still do not know the behavior of a new customer, so you can take that risk and get revenues.

ԺԱՆՆԱ ՈՍԿԱՆՅԱՆ

Ֆինանսներ, բակալավրիատ, 2-րդ կուրս

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԴՈՐՏՖԵԼԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հիմնաբառեր. ՀՀ բանկային համակարգ, վարկ, վարկային պորտֆել, առևտրային բանկեր, ՀՆԱ, հարաբերակցություն

Ներկայումս Հայաստանի ֆինանսական շուկայի ամենամեծ ոլորտը բանկային համակարգն է, իսկ զարգացած և կայացած վարկային հարաբերությունները յուրաքանչյուր երկրի ֆինանսական շուկայի կարևոր բաղկացուցիչն են: Վերլուծելով ՀՀ բոլոր առևտրային բանկերի վարկային պորտֆելների վերջին երեք տարիների ցուցանիշները՝ կարող ենք ասել, որ վարկային շուկան ՀՀ-ում ունի աճի և զարգացման միտում: Նշենք, որ 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ 17 առևտրային բանկերից վարկային պորտֆելով առաջատար 5 բանկերը կազմել են ընդհանուր վարկային պորտֆելի 60,7%-ը, իսկ ամենամեծ վարկային պորտֆելը, որը պատկանում է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ին, կազմել է ընդհանուրի 18,1%-ը:

Հայաստանի մուտքը միջազգային շուկա էապես կապված է վարկային հարաբերությունների զարգացման և կայացման հետ:

Վարկը ֆինանսական գործիք է, որը քաղաքացուն կամ ձեռնարկությա՜նը հնարավորություն է ընձեռում դրամ փոխառել՝ ապրանքներ, հումք և այլ բաներ գնելու համար՝ վճարումը կատարելով որոշ ժամանակահատվածում, սովորաբար՝ տոկոսով: Բանկային վարկավորման հարաբերությունների սուբյեկտներն են տնտեսավարող մարմինները, բնակչությունը, պետությունը, ինչպես նաև բանկերը: Վարկային գործարքում վարկային հարաբերությունների սուբյեկտները հանդես են գալիս որպես փոխատու և փոխառու: Փոխա-

յրու են իրենց ժամանակավոր ազատ միջոցները որոշակի ժամկետով փոխառուների տնօրինմանը տրամադրող իրավաբանական և ֆիզիկական անձինք: Փոխառուն վարկային հարաբերությունների այն կողմն է, որը միջոցներ է ստանում օգտագործման համար և պարտավորվում է հետ վերադարձնել սահմանված ժամկետում:

Ցանկացած դեպքում բանկային վարկավորումն իրականացվում է վարկավորման սկզբունքների խստագույն պահպանման պայմաններում: Այդ սկզբունքներն են վարկավորման համակարգի հիմքը, քանի որ արտացոլում են վարկի էությունն ու բովանդակությունը:

Վարկավորման սկզբունքներն են.

- Վարկի վերադարձելիության ժամկետայնությունը,
- Տարբերացվածությունը (դիֆերենցվածություն),
- Ապահովվածությունը,
- Վճարելիությունը:

Վերադարձելիությունը վարկի անբաժանելի մասն է: Վարկի ժամկետայնությունը վարկի վերադարձելիության անհրաժեշտ պայմանն է: Ժամկետայնության սկզբունքը ենթադրում է, որ վարկը ոչ միայն պետք է հետ վերադարձվի, այլև պետք է հետ վերադարձվի վարկային պայմանագրով սահմանված ժամկետում:

Վարկավորման տարբերացվածության սկզբունքը ենթադրում է, որ առևտրային բանկերը պարտավոր չեն միակերպ վարկավորել հաճախորդներին: Վարկը պետք է տրամադրվի այն կազմակերպություններին կամ անհատներին, որոնք ի վիճակի են այն ժամանակին հետ վերադարձնել:


Վարկի ապահովվածության սկզբունքը նշանակում է, որ վարկերը պետք է տրվեն որոշակի ապրանքանյութական արժեքների գրավի կամ այլ ապահովության դիմաց:

Վճարելիության սկզբունքը նշանակում է, որ վարկային պայմանագիրը հատուցելի է, այսինքն՝ տրամադրված վարկի գումարից բանկը փոխառուից (վարկատուից) գանձում է որոշակի վճար՝ տոկոսների ձևով: Այս սկզբունքը գործնականում իրագործվում է բանկային (վարկային) տոկոսադրույքի կառուցակարգի միջոցով: Ներկայումս բանկերի կողմից բանկային տոկոսադրույքը որոշվում է՝ ելնելով հետևյալ հիմնական գործոններից.

- Կենտրոնական բանկի կողմից առևտրային բանկերին տրամադրվող վարկերի բազային տոկոսադրույքից,
- միջբանկային վարկերի գծով միջին տոկոսադրույքից,
- բանկի կողմից ներգրավված միջոցների (ավանդներ, դեպոզիտներ) դիմաց վճարվող միջին տոկոսադրույքից,
- վարկային ռեսուրսների նկատմամբ պահանջարկի և առաջարկի հարաբերակցությունից,
- բանկի վարկային ռեսուրսների կառուցվածքից. ինչքան մեծ է ներգրավված միջոցների տեսակարար կշիռը, այնքան թանկ պետք է լինի վարկը,
- տնտեսության կողմից վարկային ռեսուրսների նկատմամբ պահանջից. ինչքան քիչ է պահանջարկը, այնքան վարկն էժան է,
- պահանջվող վարկի ժամկետից և ապահովվածությունից,

- երկրի ներսում դրամաշրջանառության կայունությունից, ինչքան բարձր է արժեզրկման տեմպը, այնքան վարկի տոկոսադրույքը բարձր է:

Այժմ ներկայացնենք Հայաստանի բանկային համակարգի մի քանի տվյալ և ցուցանիշ: Բանկային համակարգը Հայաստանի ֆինանսական շուկայի ամենամեծ ոլորտն է: 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կար 17 գործող առևտրային բանկ: Դրանք ունեին 528 մասնաճյուղ Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում, որից 237-ը գտնվում էր Երևանում: Հայաստանյան առևտրային բանկերի աշխատակիցների ընդհանուր թիվը կազմում էր 11,175 մարդ: 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի բոլոր բանկերի կողմից տրամադրված վարկերը, 2015 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, աճել են 21.2%-ով և հասել շուրջ 2,578 մլրդ դրամի: 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի բոլոր բանկերի կողմից տրամադրված վարկերը, 2016 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, աճել են 3.6%-ով և հասել են շուրջ 2,650 մլրդ դրամի: 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի բանկային ոլորտի վարկային պորտֆել/ավանդ հարաբերակցությունը կազմել է 1.10, 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1.04:¹



Գծապատկեր 1. 2000-2016 թթ. ՀՀ առևտրային բանկերի վիճակագրական ցուցանիշները՝ արտահայտված ակտիվներ/ՀՆԱ և վարկեր/ՀՆԱ հարաբերակցությամբ²

Կարևոր է ուշադրություն դարձնել նաև բանկային համակարգի ակտիվների և ՀՆԱ-ի, ինչպես նաև բանկային համակարգի վարկերի և ՀՆԱ-ի հարաբերակցությանը: ՀՀ առևտրային բանկերում 2000-2016 թթ. համար նշված հարաբերակցությունը ներկայացված է գծապատկեր 1-ում:

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առաջատար (ըստ վարկերի) հինգ բանկերը³ կազմել են ընդհանուր վարկային պորտֆելի 60.7%-ը: Վարկերի ընդհանուր գումարի մեծ մասը (92.4%) տրամադրվել է ռեզիդենտներին, որից 56.8%-ը՝ ընկերություններին (այս գումարի միայն 1.3%-ը տրամադրվել է

¹ Ընդհանուր տեղեկատվությունը՝ մասնաճյուղերի, անձնակազմի քանակը և այլն, հիմնականում ձեռք է բերվել բանկերի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններից:

² Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից: Տվյալների աղբյուրը՝


<https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx>:

³ 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ըստ վարկերի առաջատար հինգ բանկերն են՝

1. Ամերիաբանկ, 2. Արդշինբանկ, 3. Հայբիզնեսբանկ,

4. Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ, 5. Ինեկոբանկ:


պետական ընկերություններին), 35.6%-ը՝ տնային տնտեսություններին, և միայն փոքր մասն է տրամադրվել շահույթ չհետապնդող ընկերություններին ու այլ ֆինանսական կառույցներին: Նախորդ տարվա միևնույն ժամանակահատվածի համեմատությամբ վարկերի ընդհանուր ծավալում տնային տնտեսություններին տրամադրված վարկի բաժինը նվազել է 1.3%-ային կետով, իսկ ընկերությունների բաժինը՝ 0.4%-ային կետով (տե՛ս գծապատկեր 2):



Գծապատկեր 2. *Վարկերի կառուցվածքն ըստ վարկառուների*¹

Վարկերի տրամադրման արժույթի վերաբերյալ անհրաժեշտ է նշել, որ տնային տնտեսություններին և այլ ֆինանսական կառույցներին վարկեր տրամադրվել են հիմնականում դրամով (ընդհանուր վարկերից համապատասխանաբար՝ 67.3% և 75.9%)՝ ի տարբերություն ընկերությունների և շահույթ չհետապնդող ընկերությունների, որոնք նախընտրում են արտարժույթային վարկեր (ընդհանուր վարկերից համապատասխանաբար՝ 81.3% և 60.6%):

Սպառողական վարկերը, արդյունաբերության և առևտրի ոլորտներին տրված վարկերը ավանդաբար ձևավորում են բանկերի ընդհանուր վարկերի գերակշիռ մասը՝ ուսումնասիրության ժամանակահատվածի համար կազմելով համապատասխանաբար՝ 21.5%, 18% և 17.7%: Վարկավորման ամենամեծ աճը գրանցվել է շինարարության ոլորտին տրամադրված վարկերի ծավալում (2016 թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ վարկերի ծավալն աճել է 39.8%-ով): Վարկերի կառուցվածքը (տոկոսային արտահայտությամբ), ըստ տնտեսության ոլորտների, 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է գծապատկեր 3-ում:



Գծապատկեր 3. *Վարկերի կառուցվածքն ըստ տնտեսության ոլորտների*²

¹ Վարկերի կառուցվածքը ներկայացված է միայն ռեզիդենտներին տրամադրված վարկերի համար:
² Գծապատկերը կազմվել է եղինակի կողմից:

Ամենամեծ վարկային պորտֆելը պատկանում է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ին՝ 479.6 մլրդ դրամ, որը հաշվետու ամբողջ ժամանակահատվածի համար կազմել է ընդհանուր բանկային համակարգի 18.1%-ը: 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկ/ավանդ գործակիցը, 1.10 գործակցի համեմատությամբ, եղել է 1.04՝ հաշվարկված 2016 թ. դեկտեմբերի 31-ի համար: Աղյուսակում 1-ում ներկայացված են բոլոր (թվով 17) ՀՀ առևտրային բանկերի վարկային պորտֆելների վերլուծական ցուցանիշները 2015, 2016 և 2017 թվականների համար:

Աղյուսակ 1

ՀՀ առևտրային բանկերի վարկային պորտֆելների ցուցանիշները¹

Բանկեր	2017	2016	2015	Բաժինը ընդհա- նուրի մեջ, %	Վար- կա- նիշ	Փոփո- խություն 2016/2015	Փոփո- խություն 2017/2016
1. Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ	187,381	174,983	177,966	7.1%	4	(1.7%)	7.1%
2. Ամերիաբանկ	479,641	513,219	321,891	18.1%	1	59.5%	(6.5%)
3. Անեյիթ Բանկ	64,520	217,099	60,701	2.4%	13	258.4%	(70.3%)
4. Արարատբանկ	119,167	104,880	66,083	4.5%	9	58.7%	13.6%
5. Արդշինբանկ	392,528	358,005	274,462	14.8%	2	23.0%	9.6%
6. ԱրմՍվիսԲանկ	61,863	46,077	37,460	2.3%	14	23.0%	34.3%
7. Արցախ Բանկ	69,276	65,129	63,511	2.6%	12	2.5%	6.4%
8. Բիբլոս Բանկ Արմենիա	28,541	22,156	17,955	1.1%	16	23.4%	28.8%
9. Էյջ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան	95,431	119,590	161,206	3.6%	11	(22.4%)	(20.2%)
10. Ինեկոբանկ	173,066	160,155	154,638	6.5%	5	3.6%	8.1%
11. Կոնվերսբանկ	165,168	119,025	82,946	6.2%	6	42.1%	38.8%
12. Հայքիզնեսբանկ	375,983	268,469	217,938	14.2%	3	23.2%	40.0%
13. Հայէկոնոմբանկ	104,217	75,048	59,175	3.9%	10	27.1%	38.9%
14. Մելլար Բանկ	5,824	5,756	5,439	0.2%	17	5.8%	1.2%
15. Յունիբանկ	135,285	118,627	110,182	5.1%	7	7.2%	14.0%
16. Էվոկաբանկ	56,880	46,537	36,748	2.1%	15	26.8%	22.2%
17. ՎՏԲ Հայաստան	134,806	141,543	187,219	5.1%	8	(25.5%)	(4.8%)

Ուսումնասիրելով ՀՀ ԿԲ-ի կողմից վարկավորման վերաբերյալ ներկայացված վիճակագրությունը՝ կարող ենք ասել, որ ՀՀ վարկային պորտֆելի առաջատարը սպառողական վարկերն են, այս շուկան ունի զարգացման զգալի տեմպեր և ձգտում է հասնել վարկային պորտֆելի 1/4-ին: Իհարկե, նման միտումները կարող են ունենալ բացասական զարգացումներ, քանի որ սպառողական վարկերի տոկոսադրույքները բավականին բարձր են, որն էլ հանգեցնում է գնաճային ռիսկերի, հետևաբար՝ սպառողական վարկերի շուկայի զարգացման տեմպերը, եթե դրանք չեն ուղղորդվում ցածր տոկոսադրույքներ ապահովելու քաղաքականությամբ, անմիջականորեն իրենց բացասական ազդեցությունը կարող են թողնել գնաճի վրա: Ուստի հանգում ենք այն եզրակացության, որ սպառողական վարկերի հաշվին բանկային

¹ Աղյուսակում բանկերը ներկայացված են այբբենական կարգով: Ֆինանսական տեղեկատվությունը ձեռք է բերվել բացառապես 2017 թ. 4-րդ եռամսյակի համար հրապարակված միջանկյալ հաշվետվություններից և 2016 թ. տարեկան աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններից:

համակարգը կարելի է զարգացնել, իսկ տնտեսությունը՝ ոչ: Այս տեսանկյունից, տնտեսության զարգացմանը նպաստելու համար, անհրաժեշտ է խթանել բիզնես վարկավորումը՝ իջեցնելով բիզնես վարկերի տոկոսադրույքները:

Հարկ է նշել, որ առևտրային բանկերը պետք է արդյունավետորեն օգտագործեն վարկային ազատ պաշարները, այսինքն՝ եթե, օրինակ, բանկը ավանդատուների միջոցների մեծ մասը չմտածված հատկացնի վարկերի տրամադրմանը, դա կխոսի այն մասին, որ բանկը կարող է կանգնել ինչպես վարկային, այնպես էլ իրացվելիության ռիսկի առջև: Դա կանխելու նպատակով անհրաժեշտ է բազմազանեցնել բանկային գործունեությունը, ներգրավված միջոցների որոշ մասը ներդնել ժամանակակից ֆինանսական գործիքներում, ինչը բանկին հնարավորություն կտա ամրապնդել մրցակցային դիրքը ֆինանսական շուկայում:

ЖАННА ВОСКАНЯН

АНАЛИЗ КРЕДИТНОГО ПОРТФЕЛЯ КОММЕРЧЕСКИХ БАНКОВ АРМЕНИИ

Ключевые слова: банковская система Армении, кредит, кредитный портфель, коммерческие банки, ВВП, корреляция.

В настоящее время крупнейшим сектором финансового рынка Армении является банковский сектор, а передовые и зрелые кредитные отношения являются важной составляющей финансового рынка каждой страны. Анализируя показатели кредитных портфелей всех коммерческих банков Армении за последние три года, можно сказать, что на кредитном рынке Армении наблюдается тенденция к росту и развитию. Следует отметить, что в 2017 году, по состоянию на 31 декабря 5 из 17 коммерческих банков составили 60,7% от общего кредитного портфеля, а крупнейший кредитный портфель, принадлежащий Америкабанку, которое составило 18,1% от общего кредитного портфеля.

ZANNA VOSKANYAN

ANALYSIS OF CREDIT PORTFOLIO OF ARMENIAN COMMERCIAL BANKS

Key words: Armenian banking system, loan, loan portfolio, commercial banks, GDP, correlation.

At present, Armenia's banking sector is the largest sector of the financial market, and advanced and mature credit relations are making an important component of the financial market of each country. Analyzing the indicators of credit portfolios of all Armenian commercial banks over the past three years, we can say that the credit market in Armenia has a tendency to growth and development. It should be noted that in 2017, As of December 31, 5 out of 17 commercial banks in Armenia accounted for 60.7% of the total credit portfolio, and the largest credit portfolio, owned by Ameriabank, made up 18.1% of the total loan portfolio.